ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2017թվականի N 827

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N383 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետի, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N01/15.1/4596-17 և 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N01/15.1/4614-17 գրությունները.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2016 թվականի հուլիսի 1-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N383 որոշման N26 հավելվածը:
2.Որոշման N66 հավելվածից հետո ավելացնել N67 հավելվածը:
3.Հրազդան համայնքի ղեկավարի 2016 թվականի հուլիսի 1-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N383 որոշման N25 հավելվածում կատարել հետևյալ լրացումները.
-N25 հավելվածի
- «11-րդ կետի» ը) ենթակետից հետո լրացնել նոր թ) և ժ) ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.
-«թ) հսկողություն է իրականացնում ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնների պահպանմանը, կանաչ գոտիների պահպանությանը, աղբահանությանաշխատանքները ժամանակին կազմակերպմանը, չսահմանված վայրում աղբի թափման, աղբահանության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:»
-«ժ) առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին, խախտումներ թույլ տված իրավաբանական և ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու»
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված N67
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ղեկավարի
2017 թվականի հոկտեմբերի 12-ի
N 827 որոշման

2017թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

2.3-12
(ծածկագիրը)

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ աշխատակազմ) գլխավոր մասնագետի (այսուհետ՝ գլխավոր մասնագետ) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբում:

2. Գլխավոր մասնագետին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է քարտուղարին:

4. Գլխավոր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

5. Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի այլ գլխավոր մասնագետը կամ աշխատակազմի առաջատար մասնագետներից մեկը՝ քարտուղարի հայեցողությամբ:

Օրենքով նախատեսված դեպքերում գլխավոր մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Գլխավոր մասնագետը աշխատակազմի քարտուղարի կամ աշխատակազմի այլ գլխավոր մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց՝ քարտուղարի հայեցողությամբ:

6. Գլխավոր մասնագետը`

ա) աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

բ) օժանդակում է աշխատակազմի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է աշխատակազմի աշխատանքների ծրագրմանը, իսկ քարտուղարի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը.

գ) կատարում է քարտուղարի հանձնարարականները.

դ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

## 3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Գլխավոր մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

## 4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Գլխավոր մասնագետը՝

ա) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է աշխատակազմի քարտուղարի և աշխատակազմի այլ աշխատողների հետ.

բ) առանձին դեպքերում քարտուղարի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ:

## 5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Գլխավոր մասնագետն իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

## 6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Գլխավոր մասնագետը՝

ա) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,

մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ

բ) ունի Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Սոցիալական աջակցության մասինե, «Երեխայի իրավունքների մասինե, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

## 7. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Գլխավոր մասնագետը՝

ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարին.

գ) անհրաժեշտության դեպքում, քարտուղարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

դ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է քարտուղարին.

զ) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.

3) սոցիալական աջակցության պետական ծրագրերի հասցեականության մեծացման նպատակով, իր իրավասության սահմաններում, միջոցներ է ձեռնարկում սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին և ընտանիքներին հայտնաբերելու ուղղությամբ ու աջակցում է նրանց ՀՄՏՏԿ դիմելու հարցում.

4) առաջարկություններ է ներկայացնում իր իրավասության սահմաններում ձեռնարկված միջոցների արդյունքում համայնքում հայտնաբերված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքների) սոցիալական պայմանների բարելավման, այդ թվում՝ համայնքի կողմից սոցիալական ծառայությունների հնարավոր տեսակների տրամադրման ուղղությամբ.

5) ուսումնասիրում է սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացիների (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները՝ ըստ անհրաժեշտության կատարելով տնային այցելություններ, և արդյունքների մասին զեկուցում է անմիջական ղեկավարին.

6) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացուն օգնում է բացահայտել և օգտագործել դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

7) մասնակցում է համայնքում սոցիալական աջակցություն ստացողի անհատական սոցիալական ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին.

8) պահպանում է իր կողմից սպասարկվող քաղաքացիներին (ընտանիքներին) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը.

9) ամփոփում և Քարտուղարին է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման աջակցող ցանցի մյուս մասնակիցների կողմից համայնքի տարածքում իրականացվող սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի և առկա ռեսուրսների մասին ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև աջակցող ցանցի մյուս մասնակիցներին է փոխանցում համայնքի կողմից իրականացվող սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի և առկա ռեսուրսների մասին իր անմիջական ղեկավարի հետ ճշտված տեղեկատվությունը.

10) առաջարկություններ է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման ուղղությամբ.

11) մասնակցում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման, սոցիալական աջակցության համայնքային ծրագրի մշակման և իրականացման աշխատանքներին.

12) առաջարկություններ է ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման աջակցող ցանցի մյուս մասնակիցների հետ սոցիալական համագործակցության համաձայնագիր ընդունելու կամ դրան միանալու վերաբերյալ.

13) կատարում է Քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

14) անհրաժեշտության դեպքում, Քարտուղարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է ՀՄՏԿ-ի, համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.

ը) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

## 8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Գլխավոր մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*12 հոկտեմբերի 2017թվականի N 828*

*ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Երանոս Պետրոսյանի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 398 տան բնակիչ Երանոս Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝2221894, տրված՝ 2006 թվականի հունիսի 30-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 398 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր նորակառույց թաղամաս, Ջահիթափի փողոց 13:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1*
*(0223) 2-23-45, info@hrazdan.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

*13 հոկտեմբերի 2017թվականի N 829*

### ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒ, ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի 26 հոդվածի 5-րդ մասի.

## <u>Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝</u>

1.Կանխարգել, կասեցնել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13 փողոց 1/3 հասցեում Սևան քաղաքի Կարմիր բանակի փողոց 54 շենքի 35 բնակարանի բնակիչ Սամվել Սեյրանի Ալոյանի կողմից ինքնակամ իրականացվող շինարարությունը և վերացնել դրա հետևանքները:

2.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*16 հոկտեմբերի 2017թվականի N 830*

*ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՆԱՏՈՒՐ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՈՒԱՐԴ ԱՆԴՐՈՒՇԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Էդուարդ Անդրուշի Սարգսյանի /ծնված՝ 1976 թվականի ապրիլի 15-ին, ք.Հրազդան, Վանատուր թաղամաս, տուն 373 / 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը, Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 14-ին տրված ժառանգության իրավունքի վկայագրերը՝ գրանցված սեղանամատյանում՝ 1830, 1831, ՀՍՍՀ Հրազդանի տեխնիկական գույքագրման բյուրոյի կողմից 1984 թվականի մարտի 19-ին տրված բնակելի տան տեխնիկական անձնագիրը և համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծը՝ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող 811.0 քմ մակերեսով հողամասը պատկանում է Էդուարդ Սարգսյանին.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Վերականգնել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող Էդուարդ Սարգսյանին պատկանող 811.0քմ մակերեսով օրինական հողամասի նկատմամբ Էդուարդ Սարգսյանի սեփականության իրավունքը:*

*2.Հողամասի սահմանները որոշվում են «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*

*3.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող Էդուարդ Սարգսյանին պատկանող հողամասում ինքնակամ կառուցած 21.94 քմ արտաքին*

մակերեսով ավտոտնակը:
4.Ավտոտնակը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը , օրինականացման համար նախատեսված վճար չի գանձվում:
5. Ավտոտնակը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
6. Էդուարդ Սարգսյանին պատկանող բնակելի տանը՝ օժանդակ շինություններով, դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասով տրամադրել նոր հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 373:
7.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Էդուարդ Սարգսյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան, օժանդակ շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
8.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*16 հոկտեմբերի 2017թվականի N 831*

### *ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՔՐԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՓՈՂՈՑ 27 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐԽԱԹՈՒՆ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի և հիմք ընդունելով Մարխաթուն Վարազդատի Սահակյանի /ծնված՝ 1950 թվականի փետրվարի 9-ին, ք.Հրազդան, Մաքրավան թաղամաս,Ներսես Շնորհալու փողոց, տուն 27 / 2017 թվականի հոկտեմբերի 11-ի դիմումը,անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը՝ 963413, տրված՝ 2001 թվականի հունվարի 24-ին, Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 19-ին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված սեղանամատյանում՝ 1926 և համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և տրված շինությունների, դրանց պահպանման և սպասարկման համար հողամասի մակերեսի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծը՝ Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասի Ներսես Շնորհալու փողոց 27 հասցեում գտնվող 600.0 քմ մակերեսով հողամասը պատկանում է Մարխաթուն Սահակյանին.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Վերականգնել Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասի Ներսես Շնորհալու փողոց 27 հասցեում գտնվող Մարխաթուն Սահակյանին պատկանող 600.0քմ մակերեսով օրինական հողամասի նկատմամբ Մարխաթուն Սահակյանի սեփականության իրավունքը:*
*2.Հողամասի սահմանները որոշվում են «ՊԻՌԱՄԻԴԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*
*3.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասի Ներսես Շնորհալու փողոց 27 հասցեում գտնվող Մարխաթուն Սահակյանին պատկանող հողամասում 341.69 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը:*

4.Բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը , օրինականացման համար նախատեսված վճարը չիգանձվում:
5.Բնակելի տունը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
6.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Մարխաթուն Սահակյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
7.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

### *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*17 հոկտեմբերի 2017թվականի N 832*

*ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ*
*ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Արթուր Պողոսյանի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ավետիսյան փողոց 2-րդ նրբանցք 37ա տան բնակիչ Արթուր Պողոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 1341547, տրված՝ 2005 թվականի նոյեմբերի 10-ին/ Հրազդան քաղաքի Ավետիսյան փողոց 2-րդ նրբանցք 37ա հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Ավետիսյան փողոց, 2-րդ նրբանցք 37/1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*17 հոկտեմբերի 2017թվականի N 833*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով համապատասխան «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, Վարդան Բաղալյանի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

*1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 105 տան բնակիչ Վարդան Բաղալյանի կողմից Հրազդան քաղաքի Նար-Դոսի փողոցի N105 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝N1319279, տրված՝ 2005 թվականի փետրվարի 28-ին/ բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 36.3քմ արտաքին մակերեսով բնակելի տունը:*

*2.Սույն որոշման ընդունման օրվանից բնակելի տան օրինականացման համար սահմանված 47200 /քառասունյոթ հազար երկու հարյուր/ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*

*3.Շինության պահպանումը վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված է քաղաքաշինական նորմերով ու կանոններով, և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*17 հոկտեմբերի 2017թվականի N 834*

## *ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված հավելված N4-ի ցանկ N1-ի, հիմք ընդունելով Մելիք Հովանեսյանի լիազոր անձ Վարսենիկ Հովանեսյանի 2017 թվականի հուլիսի 28-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

*1.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Մելիք Հովանեսյանին թույլատրել Հրազդան քաղաքի Երևանյան փողոցի 11 շենքի թիվ 34 հասցեում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N21062017-07-0025, գաղտնաբառ՝ XRCY9ECNJIGI/ բնակարանը վերանորոգել և կատարել միջնորմների ձևափոխություն:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*     *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*17 հոկտեմբերի 2017թվականի N 835*

## *ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Անհատ ձեռներեց Վոլոդյա Ավետիսյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը՝ երկրորդ կիսամյակի համար, /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Ջրառատ 98, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շուկային հարող տարածք /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*17 հոկտեմբերի 2017թվականի N 836*

*ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ*
*ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N153-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Անհատ ձեռներեց Գագիկ Իսրայելյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը՝ երկրորդ կիսամյակի համար, /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 264 /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 837*

## *ԲԱԲԿԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի «ա» ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 101 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և Բաբկեն Ղազարյանի 2017 թվականի հոկտեմբերի 17-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 17 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ Բաբկեն Ղազարյանին կառուցապատման իրավունքով տրամադրել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 17/9 հասցեում գտնվող 20.0քմ մակերեսով հողամասը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:*
*2.Հողամասը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում:*
*3.Բաբկեն Ղազարյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:*
*4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 838*

*ԺԱՆԵՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՂԱՎԱՐ-ԽՈՐՏԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Ժանետա Պետրոսյանի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ ՝*

*1.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 132 շենքի թիվ 2 բնակարանի բնակչուհի Ժանետա Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2602540, տրված՝ 2008 թվականի հուլիսի 31-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 78 շենքին հարող տարածքում գտնվող տաղավար-խորտկարանին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 129/4:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 839*

### *ԱՐՄԵՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով «ԱՐՏԷԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրամադրված հողամասի հատակագծերը և Արմեն Բաբաջանյանի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կճառ թաղամասի թիվ 40 տան բնակիչ Արմեն Բաբաջանյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2638242, տրված՝ 2010 թվականի նոյեմբերի 12-ին/ Հրազդան քաղաքի, Հարավային թաղամասի, Կճառ փողոց 40 հասցեում գտնվող բնակելի տան 390.0քմ մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Կճառ փողոց 40/1.*

*820.0քմ մակերեսով մասինը՝ թողնելով նույնը՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Կճառ փողոց 40:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*     *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 840*

*ԱՐՄԵՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ*
*ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Արմեն Բաբաջանյանի 2017 թվականի հոկտեմբերի 16-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կոճոռ թաղամասի թիվ 40 տան բնակիչ Արմեն Բաբաջանյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 2638242, տրված՝ 2010 թվականի նոյեմբերի 12-ին/ Հրազդան քաղաքի Կոճոռ թաղամաս 40 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Կոճոռ փողոց 40:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

### *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 841*

ԿԱՌՈՒՅՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի, հիմք ընդունելով Քրիստինե Շահվալադյանի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի դիմումը.*

### *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 218 շենքի 17 բնակարանի բնակչուհի Քրիստինե Շահվալադյանին թույլատրել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց թիվ 34 հասցեում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝N13102017-07-0035, ծածկագիր՝ XMYM2VJ6UI5Y/ հողամասում կառուցել առնտրի սրահ՝ քանդելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում թիվ 1 համարի տակ նշված խանութը:*

*2.Կառուցման վերաբերյալ նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/ հիման վրա մշակել և ներկայացնել համաձայնեցման աշխատանքային նախագիծ:*

*3.Շինարարական աշխատանքները սկսելուց 3/երեք/ օր առաջ ներկայացնել N2-5 ձևի տեղեկանք:*

*4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 842*

## *ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի, հիմք ընդունելով Վլադիմիր Հովհաննիսյանի 2017թվականի հոկտեմբերի 05-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 6-րդ շենքի թիվ 39 բնակարանի բնակիչ Վլադիմիր Հովհաննիսյանին թույլատրել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Զորավար Անդրանիկի պողոտա 13/1, 13/2 հասցեում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N01082017-07-0075, ծածկագիր՝ GMBQDDTRKAZN) վարչական շենքը վերակառուցել վաճառասրահի և կառուցել պահեստային մաս:*

*2.Վերակառուցման և պահեստային մասի կառուցման վերաբերյալ նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/ հիման վրա մշակել և ներկայացնել համաձայնեցման աշխատանքային նախագիծ:*

*3.Շինարարական աշխատանքները սկսելուց 3/երեք/ օր առաջ ներկայացնել N2-5 ձևի տեղեկանք:*

*4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 843*

## *ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի, 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի3-րդ կետի 3.1 ենթակետի, հիմք ընդունելով Սնակ Ցախշիբեկյանի 2017 թվականի հոկտեմբերի 09-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 30 շենքի թիվ 60 բնակարանի բնակիչ Սնակ Ցախշիբեկյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N06102017-07-0075, ցաղտնաբառ՝ SA387S3Q9EXN/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 69 շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանի գործառական նշանակությունը փոփոխել հասարակականի՝ գրասենյակի և թույլատրել կատարել միջնորմների ձևափոխություն:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*     *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 844*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 825 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71 հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի, 72 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի.*

*Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝*

*1.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի «Կառուցման թույլտվություն տալու մասին» N825 որոշումը:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 845*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 784 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքի ղեկավարի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի «Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամաս 234 հասցեում գտնվող օրինական հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված հողամասի նկատմամբ Խաչատուր Լիպարիտի Սաֆարյանի իրավունքը վերականգնելու մասին» N784 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.*

*1)Որոշման վերնագրում «Խաչատուր Լիպարիտի Սաֆարյանի» բառերից հետո կարդալ «և Մարլենա Եղիկյանի» բառերը:*

*2)Որոշման իրավական հղման մասում «պատկանում է Խաչատուր Սաֆարյանին» բառերից հետո կարդալ «և Մարլենա Եղիկյանին» բառերը:*

*3) Որոշման 1-ին կետում «234 հասցեում գտնվող Խաչատուր Սաֆարյանին» բառերից հետո կարդալ «և Մարլենա Եղիկյանին» բառերը, «հողամասի նկատմամբ Խաչատուր Սաֆարյանի» բառերից հետո կարդալ «և Մարլենա Եղիկյանի» բառերը:*

*4) Որոշման 3-րդ կետում «Խաչատուր Սաֆարյանի» բառերից հետո կարդալ «և Մարլենա Եղիկյանի» բառերը:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*     *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*18 հոկտեմբերի 2017թվականի N 846*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 175-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 176-Ն որոշումն՝*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 175-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները՝*

*1.Ծախսային մասում՝*

*1) 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի, «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» /4111/ հոդվածում «138750.0» թիվը փոխարինել «138650.0» թվով, «Ներքին գործուղումներ» /4221/ հոդվածում «300.0» թիվը փոխարինել «400.0» թվով:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 847*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 106 որոշումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 32 շենքի 88,06քմ մակերեսով թիվ 61 բնակարանը անհատույց օտարել վարձակալ Թելման Վազգենի Հայրապետյանին, ծնված 1972 թվականի հուլիսի 14-ին անձնագիր AM 0870897, տրված 2012 թվականի սեպտեմբերի 14-ին 049-ի կողմից.*

*Համասեփականատեր ճանաչել՝*

*Ռիմա Սերոբի Հայրապետյանին-մայրը՝ ծնված1952 թվականի հուլիսի 3-ին, անձնագիր AG 0348213,տրված 2004 թվականի օգոստոսի 7-ին 049-ի կողմից:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 հոկտեմբերի 2017թվականի N 848*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՎԱՐՁԱՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդանհամայնքի ավագանու 2017թ հոկտեմբերի 10-ի N104 որոշումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Օգոստոսի 23 փողոցի 72 Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի շենքից 650,78 քմ մակերեսով տարածք և շինության ծանրաբեռնվածության հողատարածքը անվարձահատույց հանձնել «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեին» 30 տարի ժամկետով:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*